



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մայիսի 2023 թվականի N 707

«ՆԵՑՈՒԿ ՀՁ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ավագանու 2023 թվականի 26 ապրիլի թիվ 24 որոշումը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի 1-ին մասով, 693-րդ հոդվածի 1-ին մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ Վանաձոր համայնքի ղեկավարը **որոշում է**.

1. Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող 2 տրակտոր՝ 2 (երկու) տարի ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «Նեցուկ ՀՁ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:
2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ «Նեցուկ ՀՁ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. մայիսի 05
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մայիսի 2023 թվականի N 708

«ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ավագանու 2023 թվականի 26 ապրիլի թիվ 25 որոշումը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի 1-ին մասով, 693-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ Վանաձոր համայնքի ավագանին **որոշում է.**

1. Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող JCB 3CX մակնիշի 1690LL պետական համարանիշի էքսկավատորը, KAMAZ 43253-G5 մակնիշի 812 LL 70 և KAMAZ 43253-G5 մակնիշի 813 LL 70 պետական համարանիշների մեքենաները 2 (երկու) տարի ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «Վանաձորի քաղաքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ «Վանաձորի քաղաքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր(եր):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. մայիսի 05
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մայիսի 2023 թվականի N 709

ՄԱՐԻՆԵ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով նոտար Մարինե Սամվելի Գալստյանի 21.04.2023թ. թիվ 01/6604 դիմումը, Վանաձոր համայնքի ավագանու 2018 թվականի մայիսի 30-ի «Մարինե Գալստյանին վարձակալությամբ տարածք հանձնելու մասին» թիվ 63 որոշումը, 2018 թվականի հունիսի 21-ի «Անշարժ գույքի վարձակալության» թիվ 174 պայմանագիրը և Վանաձոր համայնքի ավագանու 2023 թվականի 26 ապրիլի թիվ 27 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Վանաձոր համայնքի ղեկավարը որոշում է.

1. Վանաձոր համայնքի ղեկավարի և նոտար Մարինե Գալստյանի միջև 2018 թվականի հունիսի 21-ի «Անշարժ գույքի վարձակալության» թիվ 174 պայմանագրի ժամկետը երկարաձգել 1/մեկ/ տարով, վարձավճարի չափ սահմանելով 1քմ-ի համար ամսական՝ 1200/հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ:
2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Մարինե Գալստյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել անշարժ գույքի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ համապատասխան համաձայնագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. մայիսի 05
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մայիսի 2023 թվականի N 710

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՐՎԱՆՉԱԴԵԻ ՓՈՂՈՑ 8 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գրետա Հայկի Բաղդամյանի 10.04.2023 թվականի թիվ 5795 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 04062021-06-0039 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը (87291), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**.

Վանաձոր քաղաքի Շիրվանզադեի փողոց 8 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Ա. Շիրվանզադեի փողոց, 8/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. մայիսի 05
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մայիսի 2023 թվականի N 711

ԱՆՉԱՓԱՀԱՍ ԱՐԵՆ ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հինք ընդունելով Ռուզաննա Ստեփանի Մեհրաբյանի դիմումն անչափահաս տղային՝ Արեն Արսեն Հարությունյանին պատկանող գույքը օտարելու մասին, Վանաձորի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից 2023 թվականի փետրվարի 4-ին տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 2, կետ 4), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածով, **որոշում եմ**.

Վանաձոր քաղաքի Զաքարյան փողոցի թիվ 8 շենքի թիվ 3 բնակարանի բնակիչ Ռուզաննա Ստեփանի Մեհրաբյանին (ծնված՝ 26.01.1976թ., ծննդավայրը՝ Հայաստան, քաղաքացիությունը Ռուսաստանի Դաշնություն, անձնագիր՝ Ռուսաստանի Դաշնություն, ՏԻՊ-Ք, ԿՈՂ-RUS, 550128043, տրված՝ 14.08.2018թ., Ռուսաստանի ԱԳՆ 37402-ի կողմից) թույլատրել օտարել իր անչափահաս տղային՝ Արեն Արսեն Հարությունյանին (ծնված՝ 20.05.2007թ., ծննդյան վայրը ՀՀ, Լոռի, Վանաձոր, ծննդյան վկայական՝ ԲԱ 058768, տրված՝ 06.12.2018թ., Վանաձոր ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից, անձնագիր՝ 56 20 610704, տրված՝ 10.06.2021թ Պենզայի մարզում Ռուսաստանի ՆԳՆ-Վ-ի 580-013 ստորաբաժանման կողմից, հաշվառված Պենզայի մարզի Շենիշեյսկի շրջանի գ. Պեսչանկա, փողոց Ցենտրալնայա, շենք 6, բնակարան 2) պատկանող Լոռու մարզի Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Մ. Մաշտոցի փողոցի 84/2 բնակելի տան բաժնեմասը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. մայիսի 05
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մայիսի 2023 թվականի N 712

ՎԱՆԱԶՈՐ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԳԱՅԻ ՓՈՂՈՑ 30 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՌԱՖԻԿ
ԱՇՈՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ
ՏՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ
ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ
ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռաֆիկ Աշոտի Խաչատրյանի 08.12.2022 թվականի թիվ 16902 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 01102012-06-0154 վկայականը, «Արտյոմ Սաքանյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագծերը, շինությունների բնութագրերը, եզրակացությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Տարանջատել Վանաձոր քաղաքի Գայի փողոց 30 հասցեում գտնվող Ռաֆիկ Աշոտի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տունը և դրանով զբաղեցված հողամասը՝ համաձայն «Արտյոմ Սաքանյան» ԱԶ-ի կողմից տրված թիվ 1 և թիվ 2 հատակագծերի:

2. Վանաձոր քաղաքի Գայի փողոց 30 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա) 0.04355 հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 201.93 քմ մակերեսով բնակելի տուն փոստային հասցեն՝ Վանաձոր, Վանաձոր ք. Գայի փողոց, 30 բնակելի տուն (հատակագիծ թիվ 1).

բ) 0.02547 հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 125.21 քմ մակերեսով շինությունների փոստային հասցեն՝ Վանաձոր Վանաձոր ք., Գայի փողոց, 30/1 շինություն (հատակագիծ թիվ 2):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մայիսի 2023 թվականի N 713

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՐԱՖՖՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 26 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ
ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄՈՎՍԵՍ ՀԱՅԿԱԶԻ
ԱՐԱՋԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մովսես Հայկազի Աղաջանյանի (ծնված՝ 07.01.1951թ.) լիազորված անձ՝ Նվարդ Ֆրանսի Բուլղաղարյանի դիմումը, 09.11.2021թ. տրված թիվ 47 ԱԲ 3804285 լիազորագրի թիվ 3996 ռուսերենից հայերեն թարգմանությունը (նոտարական ակտի կոդ: 741-20211208-64-5573661) լիազորագիրը, անհատական բնակելի տան 1984թ. տնային գիրքը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ՏԱՐՈՆ ՍԵՐՈԲՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 26.09.2022թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-149/22 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Րաֆֆու փողոց թիվ 26 հասցեի բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 172.6քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1979-1987թթ.-ին, դրա կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 172.6քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Մովսես Հայկազի Աղաջանյանին սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Րաֆֆու փողոց թիվ 26 հասցեում գտնվող անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 172.6քմ մակերեսով հողամասի նկատմամբ:
2. Ճանաչել Մովսես Հայկազի Աղաջանյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Րաֆֆու փողոց թիվ 26 հասցեում գտնվող 172.6քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Վանաձոր քաղաքի Րաֆֆու փողոց թիվ 26 հասցեի բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Րաֆֆու փողոց, 26/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մայիսի 2023 թվականի N 714

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԳՅՈՒՂ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԽՈՏՀԱՐՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ
ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նաիրի Վոլոդյայի Մանուկյանի 03.04.2023 թվականի թիվ 5295 դիմումը, 21.12.2020 թվականի խոտհարքից օգտվելու պայմանագիրը, Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնի 14.04.2023 թվականի տեղեկանք, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասով, 469-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Վաղաժամկետ լուծել 21.12.2020 թվականին կնքված Վանաձոր քաղաքի գյուղ Շահումյանի սեփականություն հաղիսացող խոտհարքի /ծածկագիր 06-084-0309-0061/ վարձակալության պայմանագիրը:

2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը ուղարկել ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում:

3. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը տրամադրել եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. մայիսի 05
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մայիսի 2023 թվականի N 715

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԳՅՈՒՂ ՇԱՀՈՒՄՅԱՆՈՒՄ (ԾԱԾԿԱԳԻՐ: 06-084-0103-0007) ԳՏՆՎՈՂ ԱՅԳԵՏՆԱԿԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սարգիս Հակոբի Հակոբյանի և Հակոբ Հայկազի Հակոբյանի լիզորված անձ՝ Թամարա Հայկազի Հակոբյանի 05.04.2023 թվականի թիվ 02/5574 դիմումը, 15.09.2022թ. տրված թիվ 4125 (նոտարական ակտի կոդ: 843-20220915-90-6269280) և 02.02.2023թ. տրված թիվ 50ԱԲ9097875 (նոտարական ակտի կոդ: 843-20230203-67-6649512) լիազորագրերը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1742320 վկայականը, 06.02.2023թ. ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 585 (նոտարական ակտի կոդ: 843-20220919-84-6276542) և ըստ օրենքի թիվ 587 (նոտարական ակտի կոդ: 843-20230201-84-6638848) վկայագրերը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման /86256/ քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր քաղաքի գյուղ Շահումյանում գտնվող այգետնակին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր գյուղ Շահումյան, 4-րդ փողոց, 12-րդ փակուղի, 21 այգետնակ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. մայիսի 05
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մայիսի 2023 թվականի N 716

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑ 70 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ԳԵՎՈՐԳ ԳԱԳԻԿԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գևորգ Գագիկի Մարգարյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 06102021-06-0047 վկայականը, ղեկավարելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 02-ի թիվ 88 որոշումով՝ **որոշում եմ.**

1. Փոխել Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց 70 հասցեում գտնվող, Գևորգ Գագիկի Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող 0.0515հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:
2. Փոխել Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց 70 հասցեում գտնվող, Գևորգ Գագիկի Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող 109.08քմ ընդհանուր մակերեսով շինությունների գործառնական նշանակությունը՝ բնակելիից՝ որպես հասարակական գործառնական նշանակությամբ շինություններ:
3. Շինությունների գործառնական նշանակության փոփոխության համար շինարարության թույլտվություն չի պահանջվում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մայիսի 2023 թվականի N 717

ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՂԱՅԱՆ ՓՈՂՈՑ 84 ՇԵՆՔ, 2 ՀԱՍՅԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՎԼԱԴԻՄԻՐ ԱԼԻԿԻ ԱՇՈՒՂՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վլադիմիր Ալիկի Աշոտյանի դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 03102022-06-0248 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշումով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Փոխել Վանաձոր Վանաձոր քաղաքի Աղայան փողոց 84 շենք, 2 հասցեում գտնվող բնակարանի գործառնական նշանակությունը՝ բնակելիից՝ որպես հասարակական գործառնական նշանակությամբ շինություն՝ խանութ:
2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքը հանել բնակարանային ֆոնդից:
3. Բնակարանի գործառնական նշանակության փոփոխության համար շինարարության թույլտվություն չի պահանջվում:
4. Վանաձոր Վանաձոր քաղաքի Աղայան փողոց 84 շենք, 2 հասցեում գտնվող բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Ղ. Աղայան փողոց, 84 շենք, 2 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 մայիսի 2023 թվականի N 718

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԻ ԽՃ ԹԻՎ 74Ա/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ԽԱՆՈՒԹԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նաիրա Շարբաթի Աղաջանյանի, Սիրուշո Կամոյի Պետրոսյանի, Տիգրան Կամոյի Պետրոսյանի լիազորված անձ Սամվել Շարբաթի Աղաջանյանի 29.03.2023 թվականի թիվ 5091 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1937310 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման թիվ /88519/ քաղվածքը, 07.04.2022 թվականի թիվ 1014 լիազորագիրը /նոտարական ակտի կոդ: 775-20220405-90-5808563/, 07.04.2022 թվականի թիվ 1015 լիազորագիրը /նոտարական ակտի կոդ: 775-20220405-90-5808811/, 11.10.2022 թվականի սեփականության իրավունքի թիվ 3640 վկայագիրը/նոտարական ակտի կոդ: 775-20221011-105-6339937/, 11.10.2022 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 3641 վկայագիրը /նոտարական ակտի կոդ: 775-20221011-84-6339934/ 11.10.2022 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 3642 վկայագիրը /նոտարական ակտի կոդ: 775-20221010-84-6337356/, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**.

Վանաձոր քաղաքի Շիրակի խճ, թիվ 74ա/1 հասցեում գտնվող խանութին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Գ. Նարեկացու փողոց, 1/13 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. մայիսի 05
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մայիսի 2023 թվականի N 719

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 05 ՓԵՏՐՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ
202 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 05 փետրվարի 2021 թվականի թիվ 202 որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 05 փետրվարի 2021 թվականի թիվ 202 որոշումը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքի (սահմանափակումների) վերաբերյալ 23.11.2021 թվականի թիվ ԱՏ 23112021-06-0087 տեղեկանքը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված նոր հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ**.

Վանաձոր համայնքի ղեկավարի 05 փետրվարի 2021 թվականի «Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 52 հասցեում գտնվող պատկերասրահի (նախկին կերպարվեստի թանգարան) և դրա զբաղեցրած հողամասի նկատմամբ Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը ճանաչելու, շինության և հողամասի գործառնական նշանակությունները փոխելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 202 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման 1-ին և 3-րդ կետերում «890.9» թվերը փոխարինել «897.0» թվերով:
2. Որոշման 1-ին և 2-րդ կետերում «1884.73» թվերը փոխարինել «1894.26» թվերով:
3. Որոշման 5-րդ կետերում «52» թիվը փոխարինել «52/1» թվերով:

3. Վանաձոր համայնքի ղեկավարի 05 փետրվարի 2021 թվականի թիվ 202 որոշման հատակագիծը փոխարինել Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հատակագծով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մայիսի 2023 թվականի N 720

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-4 ՄԵՔ ԹԻՎ 53Դ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռոման Վլադիմիրի Մովսեսյանի 10.03.2023 թվականի թիվ 5756 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1932269 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը (87294), 07.04.2023 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1762 վկայագիրը / նոտարական ակտի կոդ: 594-20230405-84-6816249/, 07.04.2023 թվականի թիվ 1761 սեփականության իրավունքի վկայագիրը/նոտարական ակտի կոդ: 594-20230407-105-6822519/, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**.

Վանաձոր քաղաքի Տարոն-4 Մեք թիվ 53դ հասցեում գտնվող ավտոտնակին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Տարոն-4 Մեքենաշինարարների թաղամաս, 53/1 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. մայիսի 10
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մայիսի 2023 թվականի N 721

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 02 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ
1619 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ
ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 22 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ
1960 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կադստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը մերժելու մասին թիվ Մ-25102021-06-0002 որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 02 օգոստոսի 2021 թվականի թիվ 1619 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ և 37-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 02 օգոստոսի 2021 թվականի «Վանաձոր քաղաքի Լազյան փողոցի հյուսիսային մասում ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչելու, ավտոտնակն օրինականացնելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1619 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Որոշման վերնագիրը օրինականացնելու բառից հետո լրացնել «հողամասի ճշտված սահմանները հաստատելու» բառերով:
2. Որոշման նախաբանը «բնութագիրը» բառից հետո լրացնել «անշարժ գույքերին հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը/4409/, Գասպար Վեքիլյան ԱԶ-ի կողմից տրված ճշտված սահմաններով հողամասի նոր հատակագիծը, 04.10.2022թ. թիվ 6150 հայտարարությունը (նոտարական ակտի կոդ: 763-20221003-66-6318249), 04.10.2022թ. թիվ 6154 հայտարարությունը (նոտարական ակտի կոդ: 763-20221003-66-6318269)», «ղեկավարվելով» բառից հետո լրացնել ««Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.04.2021 թվականի թիվ 698 որոշումով» բառերով:
3. Որոշման նախաբանում «ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով» բառերը փոխարինել «2021

թվականի փոտրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին կետով» բառերով:

4. Որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ «Հաստատել Վանաձոր քաղաքի Լազյան փողոցի հյուսիսային մասում գտնվող 0.0021 հա մակերեսով հողամասի ճշտված սահմաններով հատակագիծը, համաձայն Գասպար Վեքիլյան ԱԶ-ի կողմից տրված հեղամասի հատակագծի:»:

5. Որոշման 5-րդ կետում « ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա, թիվ 41-5/5 ավտոտնակ» բառերը փոխարինել «Վանաձոր Վանաձոր ք. Տիգրան Մեծի պողոտա 41/5 ավտոտնակ» բառերով:

6. Որոշման «1, 2 ,3 ,4 ,5» կետերը կարդալ համապատասխանաբար «2, 3, 4, 5, 6» կետեր:

7. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 22 սեպտեմբերի 2021 թվականի «Վանաձոր համայնքի ղեկավարի 02 օգոստոսի 2021 թվականի թիվ 1619 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 1960 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. մայիսի 10
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մայիսի 2023 թվականի N 722

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔ ՈՒՍՈՒՑՉԻ ՏՈՒՆ ԹԻՎ 4 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աննա Համլետի Զարգարյանի լիազորված անձ Միքայել Համլետի Զարգարյանի 15.03.2023 թվականի թիվ 02/4038 դիմումը, 10.03.2023 թվականի թիվ 1223 լիազորագիրը /նոտարական ակտի կեդ: 763-20230310-79-6743968/, 29.12.1998 թվականի բնակարանի սեփականաշնորհման մասին Գուգարքի գյուղապետարանի թիվ 63 որոշումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 071716 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**.

Վանաձոր քաղաքի գյուղ Գուգարք Ուսուցչի տուն թիվ 4 հասցեում գտնվող բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր, գյուղ Գուգարք, 3-րդ փողոց, 4 շենք, 4 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. մայիսի 10
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մայիսի 2023 թվականի N 723

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂ ԹԻՎ 6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ՏԱՐԱԾՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արթուր Անդրանիկի Հարությունյանի 22.03.2023 թվականի թիվ 4627 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1858855 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման թիվ /84416/ քաղվածքը, 22.03.2023 թվականի թիվ 1367 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը /նոտարական ակտի կոդ:594-20230322-2-6775133/, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր քաղաքի Խորենացու փող. թիվ 6 հասցեում գտնվող տարածքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Մ Խորենացու փողոց, 6/2 տարածք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. մայիսի 10
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ապրիլի 2023 թվականի N 724

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՉԵՐԿԱՍԻ ՓՈՂ ԹԻՎ 5/31Գ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սանասար Վոլոդյայի Շեկոյանի 17.04.2023 թվականի թիվ 6240 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1947736 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը (88657), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ որոշում եմ.

Վանաձոր քաղաքի Չերկասի փող թիվ 5/31գ հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Չերկասիի փողոց, 5/1 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. ապրիլի 26
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մայիսի 2023 թվականի N 725

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 2017 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 83-Ա որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 495 որոշմամբ ստեղծված դրամական և նյութական օգնություն տրամադրելու համար Վանաձորի համայնքապետարան դիմած քաղաքացիների դիմումների քննարկման հանձնաժողովի 2023 թվականի մայիսի 03-ի թիվ 5 արձանագրությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով՝ **որոշում եմ**.

1. Վանաձոր համայնքի 2023 թվականի բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման 10-րդ բաժնի 7-րդ խմբի 1 դասով նախատեսված միջոցներից աջակցության նպատակով 67/վաթսույոթ/ քաղաքացու հատկացնել 2 275 000 (երկու միլիոն երկու հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնին՝ մեկամսյա ժամկետում կատարել գումարի վճարում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. մայիսի 10
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մայիսի 2023 թվականի N 726

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի «ՎԱՆԱՁՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 71 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հաստատված եռամսյակային բաշխումները և հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝
որոշում եմ.

1. Վանաձոր համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 18-ի «Վանաձոր համայնքի ղեկավարի 2023 թվականի գնումները հաստատելու մասին» թիվ 71 որոշման հավելվածում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. մայիսի 10
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մայիսի 2023 թվականի N 727

ՎԱՆԱՁՈՐ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄՈՍԿՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ 46/1 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ
ՀՈՂԱՄԱՍԸ ՅՈՒՐԻ ՍՈՒՐԵՆԻ ՎԻՐԱԲՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Յուրի Սուրենի Վիրաբյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26042023-06-0112 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48¹-րդ հոդվածով և 76-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի ա) ենթակետով՝ **որոշում եմ**.

1. Վանաձոր, Վանաձոր քաղաքի Մոսկովյան փողոց 46/1 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին դասվող համայնքային սեփականություն հանդիսացող 18,0քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26042023-06-0112 վկայականի, կառուցապատման իրավունքով, 1 տարի ժամկետով տրամադրել Յուրի Սուրենի Վիրաբյանին՝ տաղավար տեղադրելու նպատակով:

2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Յուրի Սուրենի Վիրաբյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 18,0քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր՝ 1.0քմ մակերեսով հողամասի համար ամսական վճարը սահմանելով 800 (ութե հարյուր) ՀՀ դրամ, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մայիսի 2023 թվականի N 728

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 123/31 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անուշ Լևիկի Պողոսյանի 16.09.2022 թվականի թիվ 11286 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 13122012-06-0258 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով՝ **որոշում եմ.**

Փոխել Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի թիվ 123/31 հասցեում գտնվող 0,003686 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. մայիսի 10
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մայիսի 2023 թվականի N 729

ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ ՍԻՍԱԿ ՄԵԽԱԿԻ ՄԻՐԱՔՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

